ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Սարչապետ համայնք, գ.
Սարչապետ, Հեռ. (077)867459 , sarchapet.lori@mta.gov.am

N 301-18
08 օգոստոս 2018թ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՀՐԱՆՏ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Ձեզ եմ ներկայացնում Սարչապետ համայնքի ղեկավարի 2018 թվականի օգոստոսի 06-ի <<Սարչապետ համայնքի ղեկավարի օգնական Ն.Բարոյանի արձակուրդը տրամադրելու մասին>> թիվ 58 կարգադրությունը, համայնքի ղեկավարի 2018 թվականի օգոստոսի 02-ի թիվ 151-Ա որոշումը և աշխատակազմի քարտուղարի 2018 թվականի օգոստոսի 06-ի <<Մ.Քոթոյանին հղիության և ծննդաբերության արձակուրդ տրամադրելու մասին>> թիվ 57 հրամանը:

Առդիր՝3 էջ:

Համայնքի ղեկավար՝ **Բորիս Բարոյան**

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Մարտիրոսյան
077867459

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՕԳՈՍՏՈՍԻ 2018թվականի N 151-Ա

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ,ՊՐԻՎՈԼՆՈՅԵ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-092-0033-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՏՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱԼԵՆՏԻՆԱ ԹՈՐԳՈՄԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումը, քաղաքացի Վալենտինա Թորգոմի Վարդանյանի (անձնագիր՝ AN0639677) դիմումը, <<Մել>> և <<Միլ>> գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի և շինությունների հատակագծերը, նկատի ունենալով, որ տնատիրության ապասարկման համար օրինական հատկացված 0,06592 հա հողամասը և կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, հաշվի առնելով, որ բնակելի տունը և օժանդակ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2018 թվականի հունիսի 18-ի վճիռը (գործ թիվ ԼԴ3/0206/02/18)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Օրենքի ուժով ճանաչել Վալենտինա Թորգոմի Վարդանյանի սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի վարչական տարածքում, Պրիվոլնոյե բնակավայրում գտնվող, 06-092-0033-0009 կադաստրային ծածկագրով տնատիրության սպասարկման համար անհրաժեշտ 0.06592 հա մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Ճանաչել Վալենտինա Թորգոմի Վարդանյանի սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի վարչական տարածքում, Պրիվոլնոյե բնակավայրում գտնվող, 06-092-0033-0009 կադաստրային ծածկագրով, 0.06592 հա հողամասի վրա գտնվող բոլոր շինությունների նկատմամբ համաձայն <ՄԵԼ ԵՎ ՄԻԼ> ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանումում:

5. Տնատիրությունը տալ հետևյալ փոստային հասցեն՝ՀՀ Լոռու մարզ գ.Պրիվոլնոյե փ.1, տ.63:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

2018թ. օգոստոսի 02
գ.Սարչապետ